ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. սեպտեմբերի 20 թիվ 94-Ա

ԶԵՆՖԻՐԱ ՓՈՉԻԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշման պահանջները և <<Արտենիի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի N 2 որոշումը և Զ. Փոչիկյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2013 թվականի սեպտեմբերի 20-ից Զենֆիրա Վալիկոյի Փոչիկյանին ազատել <<Արտենիի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից և նշանակել <<Արտենիի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:
2. Աշխատավարձը՝ <<Արտենիի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակով սահմանված կարգով:

Ս. ԱՎԱԳՅԱՆ